ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳԻՐ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ 03.09.2018

« Հաստատում եմ »

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի

Տնօրեն----------Աշոտ Ալիխանյան

« 03 » 09. 2018 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՃԵՄԱՐԱՆ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳԻՐ

1. Ակադեմիական ազնվության քաղաքականություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Փաստաթղթի նպատակը 3
2. Ակադեմիական անազնիվ վարքագիծ է համարվում. 3
3. Ակադեմիական ազնվության խախտումներ եւ պատասխանատվություն 4
4. Դպրոցի դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում 6
5. Ուսուցչի դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում 7
6. Սովորողների դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում 8
7. Ծնողի դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում 9
8. Կազմակերպական աշխատանք 9
9. Հավելված 1: Ակադեմիական ազնվություն պահպանելու պարտավորագիր 10

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի առաքելությունը ազգային հենքի վրա համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորականի և քաղաքացու ձևավորումն է, որը բոլոր իրավիճակներում դրսևորում է սկզբունքայնություն և հանդես է գալիս որպես արդարության և ազնվության կողմնակից ու պաշտպան:

Ակադեմիական ազնվությունը որոշակի արժեքների և կարողությունների ամբողջություն է և պարտավորեցնում է, որ յուրաքանչյուր անձ դառնա առավել ազնիվ, օրինապահ և շարունակաբար զարգացնի այդ որակները:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՂՋ ՀԱՄԱՅՆՔԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՍՏԵՂԾԵԼ ԵՎ ՊԱՀՊԱՆԵԼ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՄԹՆՈԼՈՐՏ:

1. Փաստաթղթի նպատակը

- Ձևավորել և դաստիարակել ազնիվ և անաչառ քաղաքացիներ, որոնք կարողանում են համարձակորեն արտահայտել իրենց մտքերը և հարգանքով են վերաբերվում այլ մարդկանց և նրանց ստեղծած արժեքներին:
- Աջակցել դպրոցական համայնքին ստեղծել այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ կբացառվի ցանկացած անազնիվ վարքագիծ՝ խթանելով սովորողի նկարագրի որակների զարգացումը:
- Հստակեցնել դպրոցական համայնքի բոլոր ներկայացուցիչների իրավունքներն ու պարտականությունները ակադեմիական անազնիվ վարքագծի կանխարգելման և գործընթացի կանոնակարգման համար՝ նպաստելով կրթության որակի և դասավանդման արդյունավետության բարձրացմանը:

2. Ակադեմիական անազնիվ վարքագիծ է համարվում.

- Գրագողությունը. երբ առանց հղումներ կատարելու օգտագործվում են այլ մարդկանց մտքերը, կարծիքները՝ դրանք ներկայացնելով որպես սեփական մտքի արգասիք.

- Գաղտնի համաձայնությունը. երբ սովորողները համաձայնության են գալիս մեկի աշխատանքի արդյունքը որպես մյուսի կատարած գործ գնահատման ներկայացնելու վերաբերյալ.
- Աշխատանքի կրկնօրինակումը. արտագրություն, երբ նույն աշխատանքը տարբեր գնահատումների են ներկայացնում.
- Տեղեկատվության հրապարակումը. ամփոփիչ աշխատանքների, քննական նյութերի դուրս բերում լսարանից / քննասենյակից, գնահատման գործընթացի մանրամասների հրապարակում և տարածում.
- Արգելված միջոցների կիրառումը. երբ ամփոփիչ գնահատման/ քննությունների ընթացքում անթույլատրելի միջոցներ, սարքեր, գրականություն է օգտագործվում և փոխանցվում.
- Հուշարարության կամայական դրսևորում (ժեստ, ձայնային ազդանշան, միմիկա...). երբ ուրիշներին օգնելու նպատակով արտագրության հանդուրժում կամ դրան նպաստող քայլեր են կատարում.
- Վստահության չարաշահումը. երբ ներկայացնում են սխալ և ոչ ճշգրիտ աղբյուրներ, դասընկերներից և մեծահասակներից արգելված օգնություն ստանալու միտում են դրսևորում.
- Տվյալների կեղծում. երբ փորձերի, մաթեմատիկական հետազոտության / նախագծման համար ներկայացվում են կեղծ տվյալներ։
- Վարքային ցանկացած այլ դրսևորում, որը հանգեցնում է սովորողի կամ այլ սովորողների ցույց տված արդյունքների խեղաթյուրման (օրինակ՝ չթույլատրվող պարագաների մուտք գնահատման սենյակ, գնահատման ընթացքում անթույլատրելի վաքային դրսևորումներ և այլն)

3. Ակադեմիական ազնվության խախտումներ եւ պատասխանատվություն

1. Ակադեմիական անազնվության ցանկացած դեպք դեմ է ճեմարանի սկզբունքներին:

2. Սովորողի կողմից, ընթացիկ աշխատանքներ իրականացնելիս, ակադեմիական ազնվության հայեցակարգի որևէ խախտման դեպքում.
   - ✓ սովորողը ևս մեկ անգամ ուսումնասիրում է «Ակադեմիական ազնվության» քաղաքականությունը և լրացնում է «Ի՞նչ է ակադեմիական ազնվությունը» հարցումը, կրկնակի խախտման դեպքում՝ ևս մեկ անգամ ուսումնասիրում է քաղաքականությունը և ՄԴ տնօրենին ներկայացնում է 100 բառի շրջանակում շարադրանք «Ի՞նչ է ակադեմիական ազնվությունը» թեմայով,
   - ✓ սովորողը, անհրաժեշտության դեպքում նաև ծնողը նամակով տեղեկացվում են արձանագրված խախտման մասին կամ կազմակերպվում է հանդիպում սովորողի ծնողի հետ,
   - ✓ ըստ անհրաժեշտության սովորողը հանդիպում է տվյալ դպրոցի տնօրենի, համակարգողի, դասավանդող ուսուցչի, մանկավարժի և հոգեբանի հետ,
   - ✓ սովորողը հնարավորություն ունի կատարել/վերահանձնել աշխատանքը սահմանված վերջնաժամկետներում
   - ✓ ակադեմիական անազնիվ վարքագծի վերաբերյալ տեղեկատվությունը արձանագրվում է սովորողի հաշվետվության թերթիկում:

3. Սովորողի կողմից խախտվել է ակադեմիական ազնվության հայեցակարգը որևէ ավարտական պետական կամ ամփոփիչ աշխատանք ներկայացնելիս, տվյալ աշխատանքը ընդհատվում է, գնահատվում է նվազագույն միավոր՝ 0 (զրո), նախատեսված բոլոր չափանիշներից՝ առանց աշխատանքը վերահանձնելու իրավունքի:
4. Դիմորդի կողմից ճեմարանի ընդունելության քննության ժամանակ անզանիվ վարքագիծ դրսևորելու դեպքում նա ստանում է նվազագույն միավոր: Դիմորդին հնարավորություն է տրվում վերահանձնել աշխատանքը միայն ընդունող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ նրա կողմից սահմանված ժամանակահատվածում:
5. Սովորողի կողմից խախտվում է ակադեմիական ազնվության հայեցակարգը ՄԲ արտաքին գնահատման համար նախատեսված աշխատանքը ներկայացնելիս

(անհատական նախագիծ, առարկայական գնահատում), ապա նրա աշխատանքն անվավեր է համարվում, և նա զրկվում է դիպլոմից/հավաստագրից։

Արտաքին գնահատման գրավոր քննությունների, անհատական նախագծի ընթացքում

ակադեմիական ազնվության որևէ խախտում պատժվում է ՄԲ ակադեմիական ազնվության փաստաթղթում սահմանված կարգով։

(Տե՛ս Document: Academic Honesty, International Baccalaureate Organisation, August 2009 (Updated July 2011).

6. Ամփոփիչ և քննական աշխատանքների ընթացում ակադեմիական ազնվության կրկնակի խախտման դեպքում սովորողի հարցը ներկայացվում է կարգապահական խորհրդի քննարկման։

4. Դպրոցի դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- մշակել և հաստատել ակադեմիական ազնվության քաղաքականության փաստաթուղթը.
- ապահովել փաստաթղթի հասանելիությունը ճեմարանի հանրությանը. դպրոցական համայնքին ծանոթացնել ակադեմիական ազնվության փաստաթղթի դրույթներին.
- պարբերաբար կազմակերպել սեմինարներ և քննարկումներ դպրոցական համայնքի (սովորողներ, ուսուցիչներ, ծնողներ) հետ ակադեմիական ազնվություն պահպանելու, հղումներ կատարելու կարգի (MLA չափանիշ) վերաբերյալ.
- ստեղծել ակադեմիական ազնվության ապահովման համար անհրաժեշտ պայմաններ և երաշխավորություններ և ակադեմիական ազնվության պահպանմանը նպաստող մթնոլորտ.
- սովորողի նկարագրի որակների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքում պարբերաբար հղում անել ակադեմիական ազնվության բովանդակությանը.
- յուրաքանչյուր գնահատվող աշխատանքից, քննությունից առաջ անդրադառնալ

աշխատանքի իրականացման հրահանգներին և սովորողներին տեղեկացնել թույլատրելի պարագաների ցանկին (հաշվիչներ, բանաձևեր, գրքեր և այլն).

- շեշտադրել գրադարանավարի դերը ակադեմիական ազնվության ձևավորման գործընթացում.
- ունենալ ակադեմիական ազնվության ստուգումն ապահովող ծրագրային փաթեթը (“turnitin.com”) և վերահսկել դրա կիրառությունը սահմանված տարիքային խմբերում։
- Ապահովել փաստաթղթի համապատասխանելությունը ՄԲ պահանջներին՝ պարբերաբար կազմակերպելով քաղաքականության վերանայում։ Վերանայման գործընթացին ներգրավել դպրոցական համայնքի բոլոր ներկայացուցիչներին։

5. Ուսուցչի դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- մասնակցել ակադեմիական ազնվության փաստաթղթի ստեղծման, մշակման և վերանայման գործընթացին.
- սովորողներին ցույց տալ խնդիրները ինքնուրույնաբար լուծելու, հետազոտություններ անելու և տեղեկատվական գրագիտության հմտություններ ձեռք բերելու կարևորությունը.
- ուսումնասիրել հեղինակային իրավունքին վերաբերող դրույթները և սովորողներին տալ հստակ ցուցումներ օգտագործված աղբյուրները և հղումները ճիշտ կատարելու վերաբերյալ։ «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրը ընդունել է մեջբերման MLA ոճը։
- սովորեցնել այլ բառերով վերաձևակերպել և արտահայտել ինչպես սեփական, այնպես էլ այլ մարդկանց մտքերը.
- գնահատվող յուրաքանչյուր առաջադրանքից առաջ սովորողներին տեղեկացնել աշխատանքի իրականացման հրահանգների և էլեկտրոնային թույլատրելի սարքավորումների, բանաձևերի և գրքերի ցանկի մասին.
- հետևողականություն դրսևորել ակադեմիական անազնվության դեպքերի բացահայտման և կանխարգելման համար.

- մասնակցել ակադեմիական ազնվության վերաբերյալ քննարկումներին, դասընթացներին.
- ծառայել որպես ակադեմիական ազնվության վարքագծի դրսևորման օրինակ.
- ապահովել բազմաբնույթ առաջադրանքների և տարբերակների ստեղծումը՝ բացառելով նույն առաջադրանքը երկրորդ անգամ կիրառելու միտումը:

6. Սովորողների դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- ուսումնասիրել ակադեմիական ազնվության քաղաքականության դրույթները և ստորագրությամբ հաստատել կարգի իմացությունը.
- ցանկացած աշխատանք կատարելիս ընդունել և խստորեն հետևել էթիկական չափանիշներին.

  այլ հեղինակների աշխատություններից հատվածներ օգտագործելիս անպայման ներկայացնել որպես ուրիշի ուղղակի խոսք: Մեջբերումներ անելուց հետո ձևակերպել եզրակացություններ, որոնք բացառապես սեփական մտքի ընթացքի արդյունքն են:
- հետազոտական աշխատանք, ռեֆերատ կամ հոդված գրելիս կատարել հղումներ՝ պահպանելով համապատասխան տարիքային խմբի համար դպրոցի կողմից սահմանած չափանիշները, այդ թվում՝ MLA ստանդարտների կիրառումը:
- յուրաքանչյուր քննությունից, ամփոփիչ աշխատանքից առաջ տեղեկանալ աշխատանքի հրահանգներին. տպագիր և էլեկտրոնային գրականության, սարքավորումների, բանաձևերի թույլատրելի ցանկի մասին.
- իրազեկ լինել ակադեմիական անազնվության դրսևորման արդյունքում պատասխանատվություն կրելու մասին.
- մասնակցել ակադեմիական ազնվության փաստաթղթի վերանայման գործընթացին:

7. Ծնողի դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- ուսումնասիրել ակադեմիական ազնվության փաստաթղթի դրույթները և իրազեկությունը հաստատել՝ սանին տրվող «Ակադեմիական ազնվության պարտավորագիր»-ը ստորագրելով *(տե՛ս հավելված 1).*
- խրախուսել երեխաներին ակադեմիական ազնվություն դրսևորելիս, ինչպես նաև աջակցել դպրոցական համայնքին՝ հակառակ երևույթը կանխելու նպատակով.
- մասնակցել ակադեմիական ազնվությանը վերաբերող քննարկումներին և պարբերաբար անցկացվող հարցումներին.
- ծնողական խորհրդի կազմում մասնակցել ակադեմիական ազնվության քաղաքականության փաստաթղթի վերանայման գործընթացին:

8. Կազմակերպական աշխատանք

- ակադեմիական ազնվության քաղաքականությունը ներկայացնող փաստաթուղթը տեղադրվում է Շիրակացու ճեմարանի կայքում (www.shirakatsy.am) և հասանելի է ողջ համայնքին.
- կրթահամալիրի ողջ համայնքը պատասխանատու է ակադեմիական ազնվության քաղաքականության դրույթների պահպանման համար.
- ակադեմիական ազնվության քաղաքականությունը վերանայվում է ըստ անհրաժեշտության՝ ուսումնական տարվա վերջում: Քննարկումն իրականացնում է ճեմարանական համայնքը (ուսուցչական, ծնողական և աշակերտական), իսկ փաստաթուղթը հաստատվում է տնօրենության խորհրդի նիստում:
- ՄԲ-ի ծրագրի համակարգողը, խմբի մանկավարժը հետևում են ակադեմիական ազնվության փաստաթղթի դրույթներն ուսումնասիրելու, ինչպես նաև իրազեկությունը ստորագրությամբ հավաստելու գործընթացին: Սովորողի ստորագրությունը կրող փաստաթուղթը զետեղվում է նրա թղթապանակում:

9. Հավելված *1:* Ակադեմիական ազնվություն պահպանելու պարտավորագիր

Ակադեմիական ազնվություն պահպանելու պարտավորագիր

Ես _____,
Անուն, Ազգանուն

ծանոթ եմ և գիտեմ «Ճիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի «Ակադեմիական ազնվության» քաղաքականության դրույթները և համաձայն եմ սկզբունքայնորեն պահպանել դրանք:

Ես, անվերապահորեն ընդունում եմ և համաձայն եմ, որ ցանկացած դրույթի խախտում անհարիր է **ճեմարանականին**, դեմ է միջազգային բակալավրիատի կանոնակարգերին և կարող է հանգեցնել «Ճիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրում իմ ուսումնառության գործընթացի ընդհատման՝ ըստ տնօրենության խորհրդի համապատասխան որոշման:

*Աշակերտի ստորագրություն*_____ *Անիս, ամսաթիվ*_____

Ծնողի (խնամակալի) ստորագրություն _____